

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԷՄՄԱ

ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար եկեղեցին դարերով կատարել է նաև պետականության դեր: Այդ իմաստով մեծ դեր է խաղացել Ամենայն հայոց կաթողիկոսությունը իբրև հայահավաքման, ազգային միավորման և հայապահմանման կարևոր գործոն: 1828-ին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո, Էջմիածնում գտնվող Ամենայն հայոց կաթողիկոսությունը ևս անցավ ռուսական տիրապետության ներքո: Ցարական արքունիքի վարած գաղութային քաղաքականությունն անհարիր էր հայ եկեղեցու ունեցած համեմատական ազատությանը: Եկեղեցուն համազգային հեղինակությունից զրկելու, գործունեության ոլորտները սահմանափակելու և վերահսկելու նպատակով, ցարական կառավարությունը 1836 թ. հրատարակեց մի կանոնադրություն՝ «Պոլոժենիա», որով պետք է առաջնորդվեր հայ եկեղեցին ռուսական կայսրության տարածքում: Ըստ «Պոլոժենիայի» հովվապետը՝ հայոց կաթողիկոսը, որին պետք է ընտրեր աշխարհիկ և հոգևոր պատգամավորներից կազմված ժողովը, կարող էր հաստատվել միայն ցարի կողմից: Այդ նպատակով առաջադրվելու էին երկու կաթողիկոսական թեկնածուներ, որոնցից մեկին՝ քաղաքական առումով նպատակահարմարին, նախապատվություն էր տալու ցարը: «Պոլոժենիան» դժգոհությամբ ընդունվեց հայ ժողովրդի կողմից, իրավամբ գնահատվելով իբրև ազգային իրավունքները սահմանափակող մի կանոնադրություն: 19-րդ դարի կեսերից սկսած հայոց հայրապետները աննահանջ պայքար մղեցին հայ եկեղեցու իրավունքները վերականգնելու ուղղությամբ: Ներսես Աշտարակեցի, Մաթեոս Ա. Կոստանդնապոլսեցի, Գևորգ Դ. Կոստանդնապոլսեցի կաթողիկոսները չնայած ընտրվում են ցարական արքունիքի հաճությամբ, սակայն գործադրում են իրենց բոլոր ջանքերը հայ եկեղեցուն խորթ օրենքներից, ցարական «հովանավորությունից» ազատելու և իր ավանդական դերին վերադարձնելու համար: Ներսես Աշտարակեցուց հետո մի համառ հետևողականությամբ հայ ժողովուրդը կաթողիկոս է ընտրում միայն արևմտահայերից: Ցարական կառավարությունը Գևորգ Դ-ի մահից հետո (1882 թ.) փորձեր է անում ստիպել հայ ժողովրդին կաթողիկոսական թեկնածու ա-

ռաջադրել արևելահայ եկեղեցական գործիչներից: 1882—84 թթ. ընթացքում հայ ժողովրդի բոլոր խավերը զբաղված էին կաթողիկոսական ընտրություններով: Հայ հասարակական գործիչների համար կաթողիկոսի ընտրությունը սոսկ եկեղեցական, հոգևորական ոլորտին պատկանող հարց չէր: Հայոց հովվապետի ընտրությունը ամենից առաջ հայ եկեղեցու և հայ ազգի քաղաքական, հասարակական-մշակութային ինքնուրույնության հարցն էր: Այդ պատճառով արևելահայ և արևմտահայ գործիչները միահամուռ ջանքեր էին թափում վեհափառի թափուր գահի վրա տեսնել դարձյալ արևմտահայ արժանավոր մի հոգևորականի, որի ցարահպատակ չլինելու հանգամանքը կապահովեր հայ եկեղեցու համեմատական ազատությունը ցարական կառավարության մեծ ու փոքր աստիճանավորների ոտնձգություններից: Այսպիսով Կաթողիկոսական ընտրության խնդիրը դառնում էր հայ ազգային-ազատագրական շարժումների յուրատեսակ մի դրսևորում: Այդ պատճառով էլ ողջ արևելահայ մամուլը լայն քննարկման ու բանավեճի առարկա է դարձնում կաթողիկոսական ընտրություններին վերաբերող բազմաթիվ հարցեր: Ցարական արքունիքում ևս այդ հարցը քննարկվում է մի քանի անգամ: Թե ինչ մեծ նշանակություն էր տալիս ցարական կառավարությունը կաթողիկոսական ընտրություններին և ընդհանրապես Ամենայն հայոց կաթողիկոսությանը իր ներքին ու արտաքին քաղաքականության հետ կապված մի շարք խնդիրներում, պարզում են Արտաքին Գործոց նախարարությանը կից Ռուսաստանի Արտաքին քաղաքականության արխիվում պահվող բազմաթիվ նորահայտ փաստաթղթեր:

Գևորգ 4-րդի մահից հետո, 1883 թ. մարտի 13-ին Ներքին Գործերի նախարար **Դիմիտրի Տոլստոյի** նախագահությամբ Պետերբուրգում հրավիրվում է հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում էին Արտաքին Գործերի նախարար **Նիկոլայ Գիրսը**, ժողովրդական լուսավորության նախարար **Իվան Դելյանովը**, Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ **Ալեքսանդր Դոնդուկով-Կորսակովը** և Ասիական դեպարտամենտի պետ **Իվան Զինովևը**: Խորհրդակցությունը նվիրված էր հայոց կաթողիկոսի ընտրության հարցերին: Այն հրավիրվել էր հիմք ունենալով պետական քարտուղար բարոն Նիկոլաևի գաղտնի գրությունը, որով առաջարկվում էր որոշակի դարձնել ռուսական կառավարության քաղաքականությունը հայոց կաթողիկոսի ընտրության նկատմամբ: Ներկաների խնդիրն էր վճռել երկու կարևոր հարց. առաջինը՝ կաթողիկոսական թեկնածուին արևմտահայերից առաջադրելու նպատակահարմարությունը և երկրորդ՝ համապատասխան միջոցառումներ մշակել ընտրությանը մասնակցող թեմերի և արևմտահայ պատգամավորների թիվը նվազեցնելու համար: Խորհրդակցության մասնակիցները պարտադիր կարգով հայտնում են իրենց տեսակետները երկու հարցի վերաբերյալ: Փաստաթղթում կարդում ենք.

«Արտաքին գործերի նախարարը հայտարարեց, որ Կովկասի նախկին փոխարքա իշխան Բարյատինսկու կարծիքը թուրքահպատակ անձնավորությանը կաթողիկոսի կոչում շնորհելու նպատակահարմարության մասին, չնայած իր համարձակությանը, արժանացել է նախարարության համաձայնության: Նախարարությունը հույս ունի, որ այդ ուղիով կտարածվի Էջմիածնի գահի ազդեցությունը թուրքական կայսերության բոլոր հայերի վրա, կամրանա կաթողիկոսի խախտված հեղինակությունը, դրա հետ մեկտեղ կուժեղանա ռուսական ազդեցությունը Արևելքում: Ցավոք, կառավարության հետապնդած նպատակը լիովին չի իրագործվել վերջին կաթողիկոսների գործելա-

կերպի հետևանքով, նաև այն պատճառով, որ կաթողիկոսի քաղաքական նշանակությունը հետզհետե իր տեղի զիջեց Կ. Պոլսի պատրիարքին և տեղի Ազգային ժողովին: Դեռևս վերջնականապես չհաստատված ցուցակում այժմ վճռել, թե ում պետք է տալ նախապատվությունը՝ ռուսահպատակ թե թուրքահպատակ հոգևորականին, խիստ դժվար է, որովհետև եկեղեցու ապագա հովվապետի անձնական հատկություններն ու բնավորությունը կունենան ավելի վճռորոշ նշանակություն, քան հպատակությունը: Պետական քարտուղար Գիրը սկզբունքորեն չի պնդում թուրքահպատակ թեկնածուին ռուսահպատակից գերադասելու վրա, չնայած չի կարող չնշել այն հանգամանքը, որ Էջմիածնի գահի հավակնորդը ռուսահպատակով փոխարինելով, նրա ազդեցությունը Կ. Պոլսի հայ համայնքի վրա հավանաբար կդառնա խիստ աննշան և այդ անձնավորությունը չի օգտվի արտասահմանյան ազդեցիկ հայերի աջակցությունից, որոնք կասկածամտորեն են վերաբերում այն հոգևոր հայրերին, որոնք իրենց միջավայրից չեն:

Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետը մատնանշելով կովկասյան վարչության մշտական ընդհարումները վերջին երկու կաթողիկոսների հետ և Գևորգ Դ-ի թշնամական գործելակերպը Ռուսաստանի նկատմամբ, արտահայտեց այն կարծիքը, որ արտասահմանյան հայերի նկատմամբ բացահայտ հովանավորության սկզբունքը ի վնաս սեփական հրպատակներին, մշտական զիջումները Կ. Պոլսի Ազգային ժողովին, դուրս եկան բացառապես ոչ հիմնավոր: Հանգամանքների բերումով մինչև վերջին ժամանակներս կաթողիկոսները իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում էին ոչ թե հոգևոր, այլ քաղաքական գործերի վրա, ենթարկվելով Կ. Պոլսի ամենազոր ազդեցությանը: Այդ քաղաքի հայ համայնքը պատրիարքի գլխավորությամբ և՛ նախկինում, և՛ այժմ թշնամաբար է տրամադրված Ռուսաստանի նկատմամբ, հետապնդելով ազգային շահեր և ձգտելով ապագայում հասնել լիակատար ինքնավարության: Գիտակցելով, որ անհնար է օգտվել մեր կառավարության աջակցությունից, Կ. Պոլսի հայ հասարակությունը ամբողջովին ենթարկվել է Արևմտյան տերությունների, առավելապես Անգլիայի ազդեցությանը, որի գործունեությունը թուրքական նահանգներում անկասկած կուժեղանա մոտ ժամանակներում, եգիպտական հարցի լուծումից հետո: Իրերի այս վիճակում ոչ մի զիջում չի կարող մեր կողմը գրավել Կ. Պոլսի հայերին և թուրքական գլխավոր քաղաքների հայ հասարակություններին: Գեներալ-ադյուտանտ իշխան Դոնդուկով-Կորսակովի կարծիքով թվում էր ավելի ցանկալի մեկընդմիշտ հրաժարվել անիրագործելի խնդրից, կենտրոնացնել ողջ ուշադրությունը մեր հպատակ հայերի հոգևոր գործերը լավագույնս վարելու և մեր ազդեցության ամուր հաստատման վրա այն թուրքահայերի շրջանում, որոնք սերտ շաղկապված են մեզ հետ հարևանությամբ և նյութական շահերի ընդհանրությամբ, հատկապես մեզ սահմանակից թուրքական մարզերի հայ բնակիչների վրա: Այդ պատճառով իշխան Դոնդուկով-Կորսակովը արտահայտվելով ռուսահայ թեկնուծուի օգտին, համաձայն է արտաքին գործերի նախարարի կարծիքին՝ գլխավոր ուշադրությունը դարձնելով ապագա թեկնածուի անձնական հատկանիշների և բնավորության վրա, ավելորդ նշանակություն չտալով նրա ծագմանը, մտահոգվել այն բանով, որ նախատեսված անձնավորությունը չգտնվի բացառապես Կ. Պոլսի հայերի ազդեցության տակ և չհետապնդի որևէ քաղաքական նպատակ, այլ կենտրոնացնի ողջ ուշադրությունը իր հոտի հոգևոր կարիքները բավարարելու վրա:

Գաղտնի խորհրդական Զինովևը՝ Ասիական դեպարտամենտի պետը, գտնում է, որ ավելորդ է պնդել թուրքահպատակ թեկնածուի ընտրության վրա: Մեր ազդեցությունը կաթողիկոսի վրա պայմանավորված պետք է լինի բացառապես այն շահերով, որոնք մեր կառավարությունը կարող է ընձեռել նրան: Դրա համար անհրաժեշտ է ընդունել այնպիսի գործելակերպ, որի դեպքում կաթողիկոսը ստիպված կլիներ սեփական օգուտի համար հենվել բացառապես Ռուսաստանի վրա և նրա աջակցության մեջ տեսնել իր իշխանության գլխավոր հիմնավորումը:

Ժողովրդական լուսավորության նախարարը արտահայտվեց ռուսահպատակ թեկնածուին նախապատվություն տալու օգտին: Պետական քարտուղար Դելյանովի կարծիքով վերջին կաթողիկոսների շատ գործողություններ բացատրվում են հենց այն հանգամանքով, որ այդ անձնավորությունները ծընված և դաստիարակված լինելով Թուրքիայում, ի վիճակի չէին հասկանալու մեր կառավարության արդարացի պահանջները և մշտապես փորձում էին կիրառել մեր մոտ բռնապետական այնպիսի հնարանքներ, որին նրանք սովորել էին իրենց նախկին հայրենիքում: Այդ պատճառով էլ նրանք չէին կարող մեր իշխանության նկատմամբ տածել այն հարգանքը, որ իրավացիորեն պահանջում էր բարեխնամ կառավարությունը: Այս անհարմարությունները և այստեղից բխող թյուրիմացությունները կվերանան ինքնաբերաբար, երբ կաթողիկոսի կոչումը կշնորհվի Ռուսաստանում դաստիարակված անձնավորության, որը ծանոթ է քաղաքակիրթ պետության պահանջմունքներին և սովոր՝ հնազանդվել իշխանության նախադրյալներին: Դրա հետ միասին հարկ է հուսալ, որ ռուսահպատակը թուրքահպատակից առավել պակաս կձգտի ազգային ինքնավարության անիրականանալի գաղափարներին:

Քննարկելով վերոշարադրյալ տեսակետները, խորհրդակցությունը ընդունեց հետևյալ որոշումը. հրաժարվել ապագայում կաթողիկոսության հավակնող թուրքահպատակ անձնավորությանը ընտրելուց, նախապատվությունը տալ ռուսահպատակին, դրա հետ միասին գլխավոր ուշադրությունը դարձնել ոչ թե ծագման, այլ թեկնածուի անձնական հատկանիշների վրա»: (Ռուսաստանի Արտաքին Քաղաքականության Արխիվ, այսուհետև ՌԱՔԱ, ֆ. Հայկական գործեր, 1882—1883 թթ., գ. 124, էջ 82—90: Թարգմանությունը իմն է—Է. Կ.):

Խորհրդակցության քննարկման երկրորդ կարգը վերաբերում էր արևմտահայության՝ կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու ձևերին և պատգամավորների թվին: Ցարական բարձր աստիճանավորների կարծիքով Արևմտյան Հայաստանից կաթողիկոսական ընտրություններին մասնակցում էին ավելի մեծ թվով պատգամավորներ, քան ռուսահպատակ թեմերից: Առանց հաշվի առնելու տարածքային տարբերությունները, Խորհրդակցությունը որոշում է խիստ սահմանափակել արևմտահայ պատգամավորների քանակը, հրահանգ է տալիս Թուրքիայի ռուսական դեսպանին, որ իր հյուպատոսների և գործակալների միջոցով հավաստի տեղեկություններ հավաքի արևմտահայ թեմերի քանակի վերաբերյալ և բացառի առանձին խոշոր վանքերի եպիսկոպոս վանահայրերին պատգամավոր ընտրելու փաստը: Վերոհիշյալ փաստաթղթի կարևորությունը ընդգծվում է այն հանգամանքով, որ նրա բովանդակությանը ծանոթանում և իր համաձայնությունն է արտահայտում Ռուսիայի ինքնակալ կայսրը:

Թուրքիայի ռուսական դեսպանության աշխատակիցները գործի են անցնում: Նրանք տեղեկություններ են հաղորդում իրենց բարձրաստիճան ղե-

կավարներին արևմտահայության մեջ տիրող խմորումների, կաթողիկոսական թեկնածու տարբեր հոգևորականների նպատակահարմարության մասին: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ալեքսանդր Դեննետի զեկուցագիրը՝ նվիրված Էջմիածնի թափուր գահի տարբեր հավակնորդներին: Թվարկելով հավանական այդ թեկնածուներին՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանի, Կ. Պոլսի ժամանակի պատրիարք Ներսես Վարժապետյանի, Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ Մելքիսեդեկ Մուրադյանի, Էրզրումի նախկին հոգևոր առաջնորդ Հարություն Վեհապետյանի, եպիսկոպոս Մատթեոս Իզմիրլյանի և ուրիշների թեկնածությունները ցարական աստիճանավորը պատասխանատվության մեծ զգացումով քննարկում է նրանց յուրաքանչյուրի անձնական և հասարակական հատկանիշները, ցույց է տալիս ամեն մեկի դրական և բացասական կողմերը, մասնավորապես նշելով, թե որքանով նրանք կարող են համընկնել ցարական կառավարության վարած քաղաքական գծին: Ահա մի հատված այդ փաստաթղթից.

«Թուրքիայի հայ լուսավորչական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների մեջ Էջմիածնի գահի առավել նախապատվելի թեկնածուներ են համարվում հետևյալ անձնավորությունները. 1. Վանում ապրող Կ. Պոլսի նախկին պատրիարք Խրիմյան. այդ անձնավորությունը աչքի է ընկնում բարձր բարոյական հատկանիշներով, օժտված է խոսքի հիասքանչ ձիրքով, բայց լինելով հոգով բանաստեղծ, նա հեշտությամբ ենթարկվում է պոետական հրապուրանքներին: Պրակտիկ կյանքի ոլորտում արքեպիսկոպոս Խրիմյանը, ինչպես և նման խառնվածքի անձնավորությունները, խիստ համեստ գործիչներ են: Կ. Պոլսի պատրիարքության նրա կառավարման ժամանակ պատրիարքարանի դրամական գործերը մեծապես քայքայվեցին: Մեզ համար Խրիմյանի ընտրությունը ձեռնտու չէ այն հանգամանքով, որ նման մտքի և խառնվածքի պատճառով նա հեշտությամբ կարող է հրապուրվել և կանգնել ոչ մի բանի հետ չհաշտվող ընդդիմադիր ուժերի կողմը և իր կարծիքով արդար գործի համար պատրաստ է նույնիսկ մարտիրոսանալ: Բնածին դյուրահավատության պատճառով Խրիմյանը կարող է գործիք դառնալ իր մերձավոր ճարպիկ ինտրիգանների ձեռքում: 2. Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Զմյուռնիացի, գիտնական անձնավորություն, վարչական գործունեության քիչ ընդունակ՝ հակված չէ Ռուսաստանի կողմը: 3. Բարթուղիմեոս արքեպիսկոպոս Բրուսացի. նշանակալից հնարավորություններ ունի Ներսեսի պատրիարքությունից հեռանալուց հետո ընտրվել Կ. Պոլսի պատրիարք: Աչքի է ընկնում անգլիացիներին նվիրվածությամբ: 4. Մաթեոս Իզմիրլյան, ապրում է Կ. Պոլսում, հայտնի է իր անհաշտ բարքով, նվիրված է ինտրիգներին, հետաքրքրվում է առավելապես իր սեփական շահերով: 5. Խորեն Նարպեյ, արքեպիսկոպոս Պեշիկթաշի, աչքի է ընկնում գիտնականությամբ, գերազանց տիրապետում է մի քանի եվրոպական լեզուների, նշանավոր հրապարակախոս, բնավորության բարոյական չափանիշների անբավարար հատկություններով, խորամանկ է, ենթգ և հպարտ: Ռուսաստանի նկատմամբ տածում է բացահայտ հակակրանք: 6. Էրզրումի նախկին արքեպիսկոպոս Հարություն. աչքի է ընկնում առողջ դատողությամբ: Նրան խորթ են հայկական անկախության վերականգնման երազային ցնորքները: Չի վայելում պատրիարք Ներսեսի և Կ. Պոլսի հայության համակրանքը: Չունենալով լայն մտահորիզոն, Հարությունը պրակտիկ կյանքի հմուտ գործիչ է, հենվում է ռեալ հնարավորությունների վրա և առաջնորդվում ոչ թե վերացական տե-

սությունների, այլ առողջ մտածողությամբ: Կաթողիկոս ընտրվելու դեպքում բոլոր թեկնածուներից մեզ համար առավել բարձր երաշխիքներ ունեցող անձնավորությունն է նա»: (ՌԱՔԱ, Հայկական գործերի ֆ., գ. 154, էջ 3—10-ը ընդհատումներով):

Փաստաթղթում առավել ուշագրավը գլխավոր հյուպատոսի եզրակացությունն էր, որ հուշում էր մշակել կաթողիկոսի ընտրության կուռ համակարգ, որի դեպքում «եթե նույնիսկ ընտրված կաթողիկոսի անձնական հատկանիշները լիովին չհամընկնեն մեր ցանկություններին, այնուամենայնիվ նա չկարողանա հրաժարվել այն ուղուց, որը գծել է ցարական կառավարությունը իր շահերին համապատասխան»:

Թե ինչքանով իրականացան ցարական աստիճանավորի «կուռ և ամուր» համակարգ ստեղծելու ցանկությունները, ցույց տվին կաթողիկոսական ընտրությունների հետագա արդյունքները: 1884 թվի մարտի 19-ին կայացան կաթողիկոսական ընտրություններ, որի ժամանակ ձայների մեծամասնությամբ կաթողիկոս ընտրվեց Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը: Նա մեծ հեղինակություն էր վայելում աշխարհի բոլոր ծագերում սփռված հայության մեջ իբրև հայկական հարցն արծարծող հեղինակ: Սակայն Վարժապետյանը հրաժարվում է կաթողիկոս օծվելուց և մի քանի ամիս անց կնքում իր մահկանացուն: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, հայությունը ձեռնարկում է կաթողիկոսական նոր ընտրություններ: Առաջադրվում և ընտրվում են երկու կաթողիկոսական թեկնածու՝ Մելքիսեդեկ Մուրադյանը և Մակար Մամիկոնյանը: Ելնելով Ռուսական պետության մեծապետական քաղաքականությունից ցարը վավերացնում է վերջինիս ընտրությունը: 1885-ին Մակարը հայտարարվում է կաթողիկոս ամենայն հայոց: Կ. Պոլսի ազգային ժողովը դժգոհությամբ է ընդունում այդ լուրը: Արևմտահայ հոգևորականների մի մասը հրաժարվում է Մակարին իբրև կաթողիկոս հիշատակել պատարագի ժամանակ: Հետաքրքրական է գաղտնի խորհրդական Նելիդովի զեկուցագիրը այդ իրադարձությունների մասին: «Արքեպիսկոպոս Մակարի կաթողիկոսի պաշտոնում ընտրվելը հուզումներ առաջացրեց թուրքահայերի շրջանում, առանձնապես այսպես կոչված արմատականների մոտ, որոնք ձգտում էին կաթողիկոսության առաջին թեկնածուի՝ նորին սրբազնության Մելքիսեդեկ Զմյուռնացու հաստատմանը: Հրահրված նրա կողմնակիցների, գուցե և անմիջապես նրա կողմից, Կ. Պոլսի հայ մամուլը ուժգնորեն փոթորկում է հասարակական կարծիքը նոր հաստատված Մակարին կաթողիկոս չճանաչելու համար: Իր կողմից կայսերական դեսպանությունն ուշադրություն չդարձնելով հայ խառնակիչների սպառնալիքներին, ջանում էր ազդել բարձրաստիճան հոգևորականության և հայ համայնքի աշխարհիկ ազդեցիկ ներկայացուցիչների վրա, նրանց բացատրելով, որ նոր կաթողիկոսին ճանաչելուց հրաժարվելը չի սարսափեցնում Ռուսաստանին, սակայն դա կարող է բերել թուրքահայերի և Էջմիածնի հոգևոր կապերի խզումին: Պետք է արժանին մատուցել Կ. Պոլսի պատրիարք Հարությունին, ինչպես և մյուս հոգևոր հայրերին: Նրանք դիմադրեցին այսպես կոչված լիբերալների ձգտումներին և իրենց հայտարարեցին կաթողիկոս Մակարի ճանաչման կողմնակիցներ: Իրենց կողմից հոգևոր և աշխարհիկ խորհուրդների ներկայացուցիչներ Պեշիկթաշի եպիսկոպոս Խորեն Նարպեյը և թուրքական պետական խորհրդի անդամ Նուրյան էֆենդին ջերմորեն պաշտպանում էին Մակարի թեկնածությունը, ճարպկորեն և հմտությամբ վարելով այդ գործը: Նրանք փորձեցին ստիպել Ազգային Ընդհանուր ժողո-

վին ճանաչել Մակարին իբրև կաթողիկոս: Հատուկ այդ նպատակով նիստ հրավիրվեց երկու շաբաթ առաջ: Սակայն պատրիարք նախագահ Հարությունի հենց առաջին հայտարարության ժամանակ ժողովի սովորական խառնակիչները և եկեղեցու դարպասի մոտ գտնվող ամբոխը առաջացրին այնպիսի անկարգություններ, որ նախագահը ստիպված ընդհատեց նիստը և կարգը վերականգնելու համար դիմեց թուրքական ոստիկանության օգնությանը: Ազգային ժողովի նիստերը վերսկսվեցին անցած ուրբաթ, բայց այս անգամ փակ դռների հետևում: Կողմ և դեմ աղմկալից ճառերից հետո, վերջապես հաղթեց ողջամտությունը և նորին սրբություն Մակարը ձայների մեծամասնությամբ (42 ձայն ընդդեմ 17-ի) թուրքահայերի կողմից ճանաչվեց իբրև կաթողիկոս: Պատրիարք Հարությունը հոգևորականության և թուրքահայ հոտի անունից այդ իրադարձության մասին հեռագրով անմիջապես հաղորդեց Նորին Սրբություն Մակարին: Այս ամենի մասին ես պատիվ ունեցա հաղորդել Ձերդ Բարեձնությանը գաղտնի հեռագրով: Այսպիսով, համարյա երկու տարի ձգձգված կաթողիկոսի ընտրության գործը բարեհաջող վախճան ունեցավ, չնայած ճանապարհին հանդիպած բոլոր խոչընդոտներին: Այսպես հաջողվեց հարգանք ներշնչել մեր օրենքների նկատմամբ, ընտրությունների ժամանակ կիրառելով հանրահայտ «Պոլոժենիի» դրույթները և միևնույն ժամանակ պաշտպանելով թուրքահայերի ավանդական հարաբերությունն ու սերտ կապը ռուսահայերի և Էջմիածնի գահի նկատմամբ: Այդ հանգամանքը, իմ կարծիքով, մեծ նշանակություն ունի մեր վարած արևելյան քաղաքականության մեջ այժմ և ապագայում»: (ՌԱՔԱ, ֆ. գլխավոր արխիվ, Հայկական գործեր, ցուցակ 461, գ. 135, էջ 17—19):

Մակարը ժողովրդի կողմից արժանանում է «ցարընտիր» տիտղոսին, սակայն իր գործունեության առաջին իսկ քայլերից նա չի արդարացնում ցարական արքունիքի հույսերը, դեմ է արտահայտվում կառավարության մշակած և 1884-ի փետրվարին հաստատած «Կովկասի հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին որոշմանը», որով նույնիսկ հոգևոր դպրոցները պետք է ընկնեին ցարական լուսավորության նախարարության իրավասության ներքո: Մակարի ձեռնարկած միջոցառումներից առավել կարևորները նրա թափած ջանքերն են ցարական կառավարության կողմից փակված հայկական դպրոցները վերաբացելու ուղղությամբ և որոշակի քայլերը հայ կաթողիկոսների իրավունքների վերականգնման համար: Փաստորեն, ցարական աստիճանավորների ձեռնարկումները կաթողիկոսական ընտրության ուժեղ համակարգ ստեղծելու ուղղությամբ չտվին դրական արդյունքներ: Վճռող եղավ ոչ թե ցարական իշխանավորների ստեղծած համակարգը, այլ հայ կաթողիկոսների հայրենասիրական, ազգին և ժողովրդին ծառայելու ավանդական պատրաստակամությունը: Եթե «ցարընտիրն» էր դեմ դուրս գալիս կառավարության քաղաքականությանը, ապա պարզ է, թե ինչ դիրք կբռներ կառավարության քաղաքականության նկատմամբ ժողովրդի մեծ մասի համակրանքը վայելող թեկնածուն: Այդ բանը ակնառու երևաց կաթողիկոսական հաջորդ ընտրության ժամանակ: 1891-ին վախճանվեց Մակար կաթողիկոսը: 1892-ի մայիսի 5-ին կայացած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ հայ ժողովրդի բոլոր խավերի կողմից միաձայն ընտրվեց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը՝ հայ ազգային ազատագրական շարժումների և «երկաթե շերեփի» գաղափարախոսը, որն իր ազգանվեր գործունեության պատճառով, իբրև քաղաքականապես անբարեհույս անձնավորություն երկու անգամ աքսորի էր դատապարտվել օսմանյան կառա-

՝վարության կողմից (առաջին անգամ 1885-ին Վանից արտաքսվել էր Կ. Պոլիս, երկրորդ անգամ Գում Գապուի ցույցից հետո՝ Կ. Պոլսից Երուսաղեմ) և իր իսկ արտահայտությամբ «արծիվը բանտվել էր ճնճղուկի վանդակում»: Ցարական կառավարության համար հաճելի չէր տեսնել նման անձնավորությանը իր սահմաններում, հայոց հովվապետի պաշտոնում, սակայն ժողովրդական հուզումների ալիքի տակ, ավելի քան մեկ տարի ձգձգելուց հետո ցարը վավերացրեց նրա ընտրությունը 1893 թվին հունիսի 3-ին: Ցարական բարձր աստիճանավորի և օսմանյան արտաքին գործերի նախարարի երկար բանակցությունների վերաբերյալ գրագրությունները բացահայտում են այն երկակի անվստահությունը, որ տածում են երկու կողմերը նորընտիր կաթողիկոսի նկատմամբ: Երկար ժամանակ թուրքական կառավարությունը չէր համաձայնվում լուծել նրան Երուսաղեմի աքսորից ազատելու և թուրքահպատակությունը հանելու խնդիրը: Երկարատև ձգձգումներից հետո համաձայնությունը տալով հանդերձ սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը հրաժարվում է պահպանել մինչ այդ սահմանված կարգը՝ ընդունել նորընտիր կաթողիկոսին, պարգևատրվել իր տերության բարձր շքանշանով և շուքով ու պատվով ճանապարհել իր նստավայրը՝ Էջմիածին: Վախենալով արևմտահայության հուզումներից և ժողովրդական ելույթներից, սուլթանը արգելում է նույնիսկ Խրիմյանի մուտքը թուրքական պետության մայրաքաղաք: Շատ հետաքրքրական է ռուսական դեսպանության գործերի հավատարմատար, իսկական պետական խորհրդական Ժադովսկոյի զեկուցագիրը այդ իրադարձությունների մասին: «Սուլթանի հետ ունեցած իմ վերջին հանդիպման ժամանակ գաղտնի խորհրդական Նելիդովը հարմար առիթ գտավ Սուլթանի ուշադրությունը հրավիրել կաթողիկոս Խրիմյանին Էջմիածին ճանապարհելու գործը արագացնելու մեր ցանկության վրա: Սուլթանը նորից թվարկեց իր առարկումներն ու նկատառումները և խնդրեց դրանք մանրամասնորեն ու անկեղծությամբ ներկայացնել ինքնակալ կայսեր բարեհաճ ուշադրությանը, ավելացնելով, որ հենց սկզբից հայտնում է իր համաձայնությունը՝ հպատակվել նորին մեծության որոշմանը, ինչպիսին էլ որ այն լինի: Դրան համաձայն ես չհապաղեցի հայտնել սուլթանին, որ լուրջ ուշադրություն դարձնելով բոլոր առարկությունների վրա, ինքնակալ կայսրը միաժամանակ գտնում է, որ Խրիմյանի կաթողիկոս չհաստատվելը ներկայացնում է անհամեմատ ավելի մեծ վտանգ, քան այն դժվարությունները, որոնք կառաջանան նրա՝ Էջմիածնում հաստատվելուց: Այնտեղ իշխանությունների արթուն հսկողությունը կխանգարի նրան ամեն անգամ խառնվել թուրքահայերի քաղաքական գործերին: Նկատի ունենալով մեր ընդհանուր թշնամիների ցանկությունը՝ օգտագործել Խրիմյանի ուղևորության հետաձգումը հայերի շրջանում քաղաքական հուզումներ առաջացնելու համար, ցանկալի է, որ Խրիմյանին թույլտվություն շնորհվի ուղևորվել որքան հնարավոր է կարճ ժամանակում: Հավատարիմ իր խոստմանը՝ խոնարհվել ինքնակալ կայսեր կամքի առաջ, սուլթանն անհապաղ և առանց սովորական տատանումների ինձ տվեց դրական պատասխան, հայտարարելով, որ իրենից կախված հանձնարարություններ կտրվեն նույն ակնթարթում:

... Մյուս օրը ես համոզվեցի, որ Սուլթանի որոշումը այս անգամ անկեղծ և անշրջելի է: ... Սայիդ փաշան հայտնեց ինձ այդ մասին, ավելացնելով, որ Սուլթանը որոշելով Խրիմյանի ճանապարհվելու հարցը, պայման է դնում, որ նրա երթը Թուրքիայի միջով առիթ չտա ոչ մի ցույցի: Դրա համար նա-խարարը խնդրում է դեսպանությանը գործերը դասավորել այնպես, որ կա-

թողիկոսը ուղևորվի Հայֆայից և չմտնելով Կ. Պոլիս, ուղիղ անցնի Տրիեստ, կամ էլ ռուսական շոգենավով, առանց կանգ առնելու Կ. Պոլսում, ուղիղ ճանապարհվի Ռուսաստան: Ես ընդունեցի նրա հայտարարությունը և խընդրում եմ կայսերական նախարարության կարգադրությունը: Իմ կարծիքով Սուլթանը դնելով այդ պայմանները, աչքի առաջ ուներ ոչ միայն Խրիմյանի պատվին կազմակերպելիք հանդիսական ցույցերը մայրաքաղաքում, այլ նաև իրեն ցանկանում էր ազատել տհաճ պարտականությունից՝ ընդունված կարգի համաձայն կազմակերպել նոր կաթողիկոսի ընդունելությունը և շնորհել նրան թուրքական բարձր շքանշան: Պարտք համարելով այս առիթով ներկայացնելու իմ նկատառումները, ես թույլ եմ տալիս ինձ եզրակացնել, որ հարգանքով ընդունելով Սուլթանի կատարած այդ զիջումները, որոնք կարող են շոյել նրա ինքնասիրությունը, մեզ դժվար պետք է լիներ մերժել նրան նման փոքր հարցերում, նրա արած ծանր զոհաբերության դիմաց: Քանի որ ընդունված կարգի համաձայն, կաթողիկոսները սովորաբար Կ. Պոլսից ուղևորվում են Ռուսաստան ռազմանավով, ապա առանձնապես անսովոր ոչինչ չի լինի, եթե նավը վերցնի Խրիմյանին որևէ նավահանգստում, ասենք Դարդանելում և այդտեղից անկանգ ուղևորվի Բաթում: Գաղտնի տեղեկությունների համաձայն ինձ հայտնի է, որ Բ. Դուռը միջոցառումներ է մշակել Խրիմյանին ճանապարհելու համար. ֆինանսների նախարարին հրամայված է հաշվարկ կատարել և վճարել նրան հասանելիք ողջ թոշակը, որն արգելափակված էր մայրաքաղաքից նրան հեռացնելուց ի վեր»: (ՌԱՔԱ, գլխավոր արխիվ, ֆ. հայկական գործեր, գ. 101, էջ 14—15):

Հակառակ ցարական կառավարության ողջ ջանքերին, որպեսզի Խրիմյանի մուտքը Ռուսաստան անցներ աննկատ և անշուք, նրա ժամանած բոլոր վայրերում կատարվում են ինքնաբուխ համաժողովրդական մեծ շքահանդեսներ: Նախատեսված երկու եպիսկոպոսների փոխարեն նրան կամավոր ուղեկցորդներ են դառնում բազմաթիվ անձնավորություններ, որոնք նրա ժամանած ամեն մի վայրում ձնահյուսքի նման ավելանալով, վերջում դառնում են մի պատկառելի շքախումբ: Սեպտեմբերին Էջմիածնում կայանում է Խրիմյանի հանդիսավոր օծումը իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց: Նորընտիր կաթողիկոսը իր գործունեության առաջին իսկ քայլերից ջանում է բարելավել հայ եկեղեցու և ցարական կառավարության հարաբերությունները, առանց վնասելու ժողովրդի ազգային շահերին: 1895—96 թթ. նա անխոնջ գործունեություն է ծավալում Արևմտյան Հայաստանի կոտորածներից մազապուրծ գաղթականությանը տեղավորելու, վերստին իր հայրենիքը վերադարձնելու ուղղությամբ՝ Արևմտյան Հայաստանը հայաթափ անելուց փրկելու համար:

1895-ի փետրվարին ծերունազարդ կաթողիկոսը ձեռնարկում է հեռավոր մի ճամփորդություն՝ դեպի Ս. Պետերբուրգ ցարի մոտ ընդունելության, հայկական բարենորոգումների հարցը վերստին արծարծելու նպատակով: Սակայն նա համոզվում է, որ փոխվել է Ալեքսանդր երկրորդի հայանպաստ քաղաքականությունը. նրա որդի Ալեքսանդր 3-րդը վարում է հակահայկական քաղաքականություն, ձգտելով սիրաշահել թուրքական սուլթանին: Նույն հակահայկական քաղաքականությունն է որդեգրում նրա որդի Նիկոլայ 2-րդը, որը 1903 թ. օրենք է ընդունում հայ եկեղեցու ունեցվածքը հարկանիս բռնագրավելու համար: Զգալով, որ իր բազմաթիվ դիմումները և բողոքները մնում են «ձայն բարբառոյ յանապատի», Խրիմյանը հրաման է արձակում Ռուսաստանի տարածքում գտնվող բոլոր թեմական առաջնորդներին՝ չենթարկվել արքայական հրամանին, ցարական աստիճանավորներին

չթույլատրել ցուցակագրելու եկեղեցու ունեցվածքը: Արևելահայ ազատագրական շարժումների հետաքրքիր էջերն են կազմում համաժողովրդական այն պայքարը, որ գլխավորեց ալեհեր կաթողիկոսը՝ պաշտպանելով իր ժողովրդի իրավունքները, հայ եկեղեցու անկախությունն ու ինքնուրույնությունը: Երկու տարի տևեց այդ պայքարը, որն ստիպեց «ամենաողորմած ցարին» վերացնել հունիսերեքյան հրամանը, թույլատրել հայկական դպրոցների գործունեությունը, հայ եկեղեցու համեմատական ազատությունը հոգևոր և մշակույթային բնագավառում:

Նույն գործունեությունն են որդեգրում նաև 20-րդ դարասկզբի հաջորդ կաթողիկոսները: